ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան 2501,
Կ.Դեմիրճյանի անվ. հրապարակ 1,
Հեռ.՝ (226) 43434, Էլ. փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

N 2459
30 սեպտեմբեր 2025թ.

«ԳՈՌ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ» ԱՁ-ԻՆ

Հարգելի պարոն Նիկողոսյան,

Համաձայն 2025 թվականի հուլիսի 17-ին Չարենցավանի համայնքապետարանի և «ԳՈՌ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ միջև կնքված սեղանի համակարգիչների մատակարարման թիվ «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2025/7-1» պայմանագրի՝ «ԳՈՌ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ» անհատ ձեռնարկատերը պարտավորվել է պայմանագրի կնքման օրվանից երեսուն օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պայմանագրով սահմանված թվով չորս հատ սեղանի համակարգիչ, սակայն մինչ օրս այն չի մատակարարվել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսվարող սուբյեկտը դրսևորել է անբարեխիղճ տնտեսական վարքագիծ, որով պայմանավորված չի բավարարվել Պատվիրատուի կարիքը, Չարենցավանի համայնքապետարանը միակողմանի ամբողջությամբ լուծում է 17.07.2025թ. կնքված թիվ «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2025/7-1» պայմանագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատած «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**